ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Վ.Ա.ՊԱՀԼԱՎՈՒՆԻ

Մարդասիրական իրավունքի արմատները բավական խորն են: Դրանք նույնքան հին են, որքան և պատերազմը, իսկ պատերազմը նույնքան հին է, որքան կյանքը երկրի վրա:

Ուսումնասիրելով համաշխարհային, մասնավորապես, Եվրոպայի պատմությունը՝ ակներև է դառնում, թե ինչ հսկայական տեղ է զբաղեցնում այդտեղ պատերազմը: Մարդը, հատկապես արական սեռի ներկայացուցիչը, պատմության մեջ մտել է որպես մարտիկ: Դրա վկայություններն են բազմաթիվ գրավոր աղբյուրները, որոնք նկարագրում են անցյալի տիրակալների ռազմական արշավանքները և պատերազմները: Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով համաշխարհային պատմությունը՝ տեսնում ենք, որ քաղաքակրթությունները կանոններ էին հաստատում, որոնց նպատակը պատերազմի ժամանակ դաժանության սանձահարումն էր:

Դարերի ընթացքում պատերազմը ժողովուրդների միջև հարաբերությունների կարևորագույն դրսևորում էր: Վերջին 5000 տարվա ընթացքում եղել են մոտավորապես 14000 պատերազմ, որտեղ զոհվել են գրեթե 500 մլն. մարդ: Վերջին 3400 տարում Երկրում ընդամենը 250 տարի է խաղաղություն տիրել: Զինված հակամարտությունների իրավունքը ձևավորվել է հազարամյակների ընթացքում և այժմ այն հենվում է պատերազմներ վարելու՝ ընդհանուր ճանաչում գտած սովորույթների հիմքի վրա:

Ռազմական ժամանակաշրջանի տառապանքներից և կամայականություններից մարդու պաշտպանության գաղափարը, ծագելով մարդկության զարգացման վաղ փուլում, հետզհետե կատարելագործվում էր և ներկայումս արտահայտվում է միջազգային պայմանագրերի ձևով, որոնք ներկայացնում են զինված հակամարտությունների իրավունքը: Զինված հակամարտությունների իրավունքի խնդիրը այդ հակամարտության զոհերի տառապանքները թեթևացնելն է և այդ նպատակով զինված պայքար վարելու միջոցների և ձևերի ընտրության համար որոշակի կանոններ հաստատելը[1]:

Մարդկային հասարակության զարգացման վաղ փուլում գերիշխում էր այսպես ասած «ջունգլիների օրենքը»: Ամենաուժեղի և ամենաուխտադրուժի հաղթանակը ուղեկցվում էր ահավոր կոտորածով և աներևակայելի գազանություններով: Սակայն նույնիսկ այդ ժամանակշրջանում, հատկապես նստակյաց ժողովուրդների մեջ, գտնում ենք պատերազմի արհավիրքները մեղմելու փորձերի հետքեր: Հնագետները հայտնաբերել են, որ նեոլիթի դարաշրջանում մարտում վիրավորվածներին խնամում էին: Պապուայում (Նոր Գվինեա), որտեղ ցեղերը մշտապես պատերազմում էին միմյանց հետ, հակառակորդին միշտ նախօրոք զգուշացնում էին ռազմական գործողությունները սկսելու ժամանակի մասին[2]:

---

[1] *Տե՛ս Զինված հակամարտությունների իրավունքի ԿԽՄԿ-ի միջազգային դասընթացներ (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, Ե., 1999, էջ 7):*

[2] *L. Oppenheim, International Law, London, 1948, p. 156.*

Իսկ ինչպիսին էր իրադրությունը հնադարի մեծ քաղաքակրթություններում մ.թ.ա. 3000-1500 թթ.: Նրանց տնտեսությունը հիմնված էր ստրկության վրա: Ստրկությունը, լինելով նողկալի երևույթ, միաժամանակ առաջընթաց քայլ էր, քանի որ գերեվարված թշնամիների կյանքը պահպանելու հնարավորություն էր ընձեռում: Քաղաքների աճի, ազգերի ձևավորման և միջազգային կապերի զարգացման շնորհիվ մոտավորապես մ.թ.ա. 2000թ. սկզբներին ծագեցին հետագայում միջազգային կոչվող իրավունքի առաջին կանոնները: Շումերների ռազմական գործողությունները արդեն լիովին կազմակերպված գործընթաց էին, որոնք ուղեկցվում էին պատերազմի հայտարարմամբ, զինադադարի համար նախատեսված հնարավորություններով, բանագնացների անձեռնմխելիությամբ: Սովորաբար փրկագինը մուծելուց հետո պատանդներին ազատ էին արձակում[3]:

Հին Եգիպտոսի մշակույթը ներծծված էր մարդկանց նկատմամբ հոգատարությամբ: Վնաս չէր կարելի հասցնել հյուրին, նույնիսկ եթե նա թշնամի էր: Խեթերի քաղաքակրթությունում գոյություն ունեին պատերազմ վարելու մարդասիրական կանոններ: Նրանք ունեին օրենքների հավաքածու՝ հիմնված ազնվության և արդարության սկզբունքների վրա: Խեթերը պատերազմ էին հայտարարում և խաղաղության պայմանագրեր ստորագրում: Թշնամական քաղաքների անձնատուր լինելու դեպքում դրանց բնակչությունը սովորաբար չէր տուժում: Դիմադրություն ցույց տված քաղաքների հետ ավելի դաժան էին վարվում, սակայն այս դեպքում ևս շատ հազվադեպ էին կոտորած կազմակերպում կամ բնակչությանը ստրկացնում:

Մ.թ.ա. առաջին հազարամյակում Ասիայում նոր քաղաքակրթություններ էին ծաղկում: Շատ կարևոր և նշանակալի տեղեկություններ են պարունակում հին հնդկական գրավոր աղբյուրները (վեդաներ): Մահաբհատրա էպոսում և Մանուի մասին առասպելներում արտացոլված օրենքները զինվորներին արգելում էին սպանել շարքից դուրս եկած թշնամիներին և նրանց, ովքեր հանձնվում էին: Վիրավոր ռազմագերիների ապաքինումից հետո նրանց պետք է հայրենիք վերադարձնեին: Թույլատրվում էին պատերազմ վարելու ոչ բոլոր տեսակներն ու ձևերը. վառվող նետերի հետ մեկտեղ արգելված էին նաև թունավոր նետերը: Այդ օրենսգրքի որոշ կանոններ հիշեցնում են պատերազմի օրենքների և սովորույթների մասին 1907թ. Հաագայի համաձայնագրի կանոնները:

Հին հունական քաղաքակրթության դարաշրջանում պատերազմի իրավունքի հարցերը շատ հակասական լուծում են ստացել: Դեռևս «Իլիականում» Հոմերոսը նկարագրում է պատերազմը, որը, ընդհանուր առմամբ, ազնիվ խաղի կանոններով էր վարվում: Ալեքսանդր Մակեդոնացին մարդասիրաբար էր վերաբերվում պարտվածներին, չէր թույլատրում վիրավորել կանանց արժանապատվությունը: Հին Հունաստանում պարտված թշնամին դառնում էր հաղթողի սեփականությունը, որը, ըստ իր ցանկության, կարող էր ստրկացնել նրան[4]: Երբ իր նվաճումների շնորհիվ Ալեքսանդր Մակեդոնացին ընդլայնեց հունական տիրույթների սահմանները, շատերին ակնհայտ դարձավ, որ մարդիկ սկզբունքորեն իրարից ոչ մի բանով

---

[3] *Humanitarian law in Armed Conflicts, Manual, edited by the Federal Ministry of Defence of the Federal Republic of Germany, August, 1992, p. 12.*

[4] Տես նույն տեղում:

չեն տարբերվում: Դա սկիզբ դրեց նոր փիլիսոփայական ուղղությանը՝ ստոիցիզմին, որը նոր դարաշրջան բացեց մարդասիրական իրավունքի պատմության մեջ:

Մարդասիրական մտքի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցավ Հռոմեական կայսրությունը: Հռոմը իշխում էր ուժի, կազմակերպվածության և օրենքի օգնությամբ: Հռոմեացիները օրենքը բարձրացրել էին չտեսնված աստիճանի: Սակայն դրա գործողությունը կիրառելի էր միայն Հռոմեական կայսրության սահմաններում: Բնական իրավունքը տարածվում էր միայն Հռոմեական քաղաքների վրա: Թշնամական պետությունների ժողովուրդները օրենքից ուղղակի դուրս էին: Պարտվածները կարող էին իրենց հույսը դնել միայն հաղթողի գթասրտության վրա: Գերեվարված զինվորները և քաղաքացիական բնակչությունը սովորաբար տանջանքների էին ենթարկվում: Հռոմեական կայսրության հզորության գագաթնակետին ստոիկների դոկտրինը մտավ իր դասական դարաշրջանը: Դրա կողմնակիցները հռչակում էին բոլոր մարդկանց հավասարությունը և դատապարտում ստրկությունը: Նրանք պնդում էին, որ պատերազմը չի հանգեցնում բոլոր օրենքների վերացմանը :

Պետք է նշել, որ հռոմեացիներին և ստոիկ փիլիսոփաներին է պատկանում արդարացի պատերազմի գաղափարը, որն այնուհետև վերածնվեց միջնադարում և ահավոր հետևանքների հանգեցրեց: Պատերազմը կարող է սկսվել միայն պաշտպանության նպատակով կամ էլ արդարության վերականգման համար: Զավթիչները միշտ փորձում էին իրենց զավթումները և հակառակորդների ոչնչացումը արդարացնել կրոնական և բարոյական պատճառներով:

Ուսումնասիրելով հին աշխարհի պատերազմների օրենքները և սովորույթները՝ հանգում ենք այն եզրակացության, որ այդ ժամանակաշրջանում միջազգային իրավունքի հատուկ գիտություն գոյություն չուներ: Հնադարի պատմիչների, փիլիսոփաների և իրավաբանների դատողությունները հիմնականում վերաբերում էին պատերազմների պատճառներին և բնույթին: Հույն փիլիսոփա Սոկրատեսը առաջարկում էր սահմանափակել պատերազմ հասկացությունը «բարբարոսների» հետ զինված պայքարով:

Պատերազմի ժամանակ մարդասիրական գաղափարների կիրառման օրինակներ է տալիս նաև հայոց պատմությունը: 370թ. աշնանը պարսից արքա Շապուհ Երկրորդի և հայոց բանակի սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի միջև տեղի ունեցած ճակատամարտում հաղթանակած հայոց սպարապետը, գերեվարելով Շապուհի կանանոցը, այն վերադարձնում է անվնաս: Մինչդեռ, այս իրադարձությունից մեկ տարի առաջ Շապուհը կոտորել էր հազարավոր խաղաղ բնակիչների՝ կանանց, երեխաների, ծերերի՝ :

Մարդասիրական մտքի զարգացման վրա հետևողականորեն ազդող մյուս գործոններն են՝ քրիստոնեությունը, մահմեդականությունը և միջնադարյան աբպետությունը: Քրիստոնեությունը ծանր հարված հասցրեց հին աշխարհի իրավական և գաղափարական կառուցվածքին: Ըստ քրիստոնեա-

---

[5] *Draft Rules for the Limitation of the Dangers Incurred by the Civilian Population in Time of War, ICRC, Geneva, 1958, p. 66.*

[6] *Հայ ժողովրդի պատմություն, խմբագրությամբ պրոֆ. Ս.Մելիք-Բախշյանի, Ե., 1975, էջ 369:*

կան ուսմունքի, մարդկային սերը պետք է աստվածային սիրո արտացոլումը լինի: Այն պետք է տարածվի բոլորի, նույնիսկ թշնամիների վրա: Չնայած դրան, եկեղեցական իշխանությունները համաձայնվեցին օրինականացնել պատերազմը՝ «մի սպանիր» և «սիրիր թշնամուդ» պատվիրաններին հակառակ: Եվ եթե, ըստ եկեղեցու, պատերազմը «արդարացի էր», ապա գերիներին (այդ թվում՝ երեխաներին և կանանց), որոնք սովորաբար հերետիկոսներ էին համարվում, թույլատրվում էր սպանել կամ ստրկացնել:

Քրիստոնեությունը պաշտոնական կրոն ընդունելուց հետո ս. Ավգուստինոսը մ.թ. V դ. մշակեց մի տեսություն, որը փոխ էր առել հռոմեացիներից: Դրա նպատակն էր քրիստոնյաներին ազատել խղճի խայթից: Դա քաջ հայտնի «արդարացի պատերազմի» դոկտրինն էր: Այդ տեսությունը հավատացյալներին հնարավորություն տվեց արդարացնել պատերազմը՝ առաջարկելով փոխզիջում բարոյական գաղափարների և քաղաքական անհրաժեշտության միջև: Դրա իմաստը հետևյալն էր. բնական կարգը աստվածային կարգի արտացոլումն է: Օրինական կառավարողը կարող է կարգ հաստատել: Քանզի նպատակը արդարացնում է միջոցները, իշխողի կողմից սկսված պատերազմը չի կրում մեղք: Արդարացի հռչակված պատերազմն այն է, որն սկսվել է Աստծո կամքով, իսկ հակառակորդը Աստծո թշնամին է, և այդ պատճառով, բնականաբար, անարդարացի պատերազմ է վարում[7]:

Ասպետության կանոնները որոշ առումով իրենց ներդրումը ունեցան միջազգային իրավունքի զարգացման մեջ: Պատերազմ հայտարարելը, բանագնացի անձեռնմխելիությունը և զենքի որոշ տեսակների կիրառման արգելքը ասպետության թողած ժառանգությունն են: Սակայն ասպետության կանոնները վերաբերում էին բացառապես քրիստոնյաներին, ընդ որում՝ միայն ազնվազարմ ծագումով քրիստոնյաներին:

Մահմեդականությունը չափավորության կոչ է անում դիմադրությունը դադարեցրած հակառակորդի նկատմամբ, սակայն հիմնականում այն դեպքում, եթե նա հավատակից է: Արաբների պատերազմական սովորույթների բովանդակությունը կախված էր նրանից, թե ով էր նրանց հակառակորդը՝ հավատակիցնե՞րը, թե՞ «անհավատները»: Մահմեդական պետությունների միջև պատերազմի դեպքում շարիաթի կանոնները կոչ էին անում ամեն ջանք գործադրել հաշտության հասնելու համար, խնայել տները, ցորենի արտերը: Տարվա մեջ չորս ամսվա ընթացքում արգելվում էր ռազմական գործողություններ վարել, քանի որ դրանք սրբազան ամիսներ էին: «Անհավատների» նկատմամբ թույլատրվում էր «սրբազան պատերազմ» վարել, սակայն արգելված էր ծերերի, կանանց և երեխաների սպանությունը: Կարելի է մեջբերել առաջին խալիֆ Աբու Բաքրի խոսքերը, որը նա արտասանել է իր զորքի առջև, 632թ. «Կանանց, երեխաների և ծերերի արյունը չպետք է կեղտոտ հետք թողնի ձեր հաղթանակի վրա: Դուք չեք ոչնչացնի ոչ մի արմավենի, չեք այրի ոչ մի բնակավայր, չեք կտրի ոչ մի պտղաբեր ծառ: Չեք մորթի ոչ մի անասուն, կսահեք դրանք ձեր սեփական ապահովման համար»[8]:

---

[7] *Жан Пикте, Развитие и принципы международного гуманитарного права [Международный Комитет Красного Креста (այսուհետև՝ МККК), М., 1993, с. 20].*

[8] *Զինված հակամարտությունների իրավունքի ..., էջ 3:*

Աշխարհի բաժանումը հավատակիցների և անհավատների՝ ահավոր հետևանքներ ունեցավ ողջ միջնադարյան քաղաքակրթության, մասնավորապես մարդասիրական մտքի զարգացման վրա: Քրիստոնյաների և մահմեդականների միջև պատերազմներում գրեթե չէին երևում մարդասիրական դրսևորումներ, երկու հակամարտող կողմերն էլ իրենց կաշկանդված չէին զգում գթասրտության և մարդասիրական նորմերով:

Խաչակիրների և արաբների՝ մարդասիրական գաղափարի կիրառման տարբերությունները բազմիցս դրսևորվել են XI-XIV դդ. խաչակրաց արշավանքների ժամանակ: Այսպես, երբ Սալահ-ադ-Դինը 1187թ. մտավ Երուսաղեմ, նրա զինվորները չսպանեցին և դաժան վերաբերմունք չցուցաբերեցին քաղաքի բնակչության նկատմամբ: Քրիստոնյաների պաշտպանության համար նա հատուկ պարեկներ էր ստեղծել: Հետագայում հարուստ գերիներն ազատվեցին փրկագնի միջոցով, իսկ չքավորները՝ առանց փրկագնի: Մինչդեռ խաչակիրները 1099թ. Երուսաղեմը գրավելուց հետո կոտորել էին ողջ բնակչությանը[9]: Խաչակրաց արշավանքները միլիոնավոր մարդկանց կյանք խլեցին: Խաչակիրների կատարած հանցագործությունները սեպ խրեցին Արևմուտքի և Արևելքի հարաբերությունների մեջ, որոնք մինչև վերջ էլ չբարվոքվեցին: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ բանակներում գոյություն չուներ բժշկական ծառայություն: Ասպետներին սովորաբար ուղեկցում էին իրենց անձնական բժիշկները: Ազնվազարմ ծագում չունեցող սեփական վիրավորներին այդ պատճառով թողնում էին տանջվելու, իսկ վիրավոր թշնամիներին մահակով սպանում էին: Գերիներին, որոնց համար փրկագին չէին վճարում, սպանում էին: Ավելի վատ վիճակում էր գտնվում քաղաքացիական բնակչությունը: Երբ պաշարված քաղաքը գրավում էին և թալանում, նրա կայազորը վերացվում էր, իսկ կանանց և երեխաների ճակատագիրը որոշում էր հաղթողը:

Պետք է նշել, որ խաչակրաց արշավանքների ժամանակ մահմեդական պետությունների դրսևորած մարդասիրության օրինակները եզակի էին: Զարգացման ավելի ցածր աստիճանի վրա գտնվող մահմեդական պետությունները և ցեղերը ոչ միայն չէին կիրառում այդ ժամանակաշրջանի մարդասիրական նորմերը, այլև տարբերություն չէին դնում մարտիկների և ոչ մարտիկների, արական և իգական սեռի բնակչության միջև: Դրա վառ ապացույցն են Լենկթեմուրի արշավանքները:

Տվյալ ժամանակաշրջանում տարբերություն չէր դրվում քաղաքացիական և ոչ քաղաքացիական բնակչության միջև: Քաղաքացիական բնակչությունը նույն կերպ ենթարկվում էր պատերազմի արհավիրքներին, ինչպես և մարտիկները:

Եկեղեցին ջանքեր էր գործադրում պահպանելու եկեղեցական գույքը և եկեղեցուց կախյալ անձանց՝ ֆեոդալական պատերազմների հետևանքներից պաշտպանելու նպատակով: Այսպես, 1027թ. եկեղեցին Արևմտյան աշխարհին առաջարկեց այսպես կոչված, «աստվածային զինադադար», որը ռազմական գործողություններն արգելում էր կիրակի օրերին՝ շաբաթ գիշերից մինչև երկուշաբթի առավոտ: Այնուհետև այն երկարաձգվեց և սկսվում էր հինգշաբթի գիշերից: Այդ կարգը շատ թե քիչ պահպանվում էր:

---

[9] В.Калугин, Л.Павлова, И.Фисенко, Международное гуманитарное право, Учебное пособие, Минск, 1999, с. 16.

Չնայած այս մարդասիրական քայլերին, եկեղեցին ճանաչում էր գերիներին, որոնք համարվում էին հերետիկոսներ, սպանելու կամ ստրկացնելու իրավունքը (նաև ղուրանը, գերին համարվում էր իր. տերը կարող էր նրա հետ վարվել ուզածի պես, այդ թվում նաև սպանել, թեև դա չէր խրախուսվում): Միևնույն ժամանակ, եկեղեցին փորձում էր պատերազմ վարելու միջոցները սահմանափակել: Այսպես, մասնավորապես, 1139թ. Լաթերանի եկեղեցական ժողովն արգելեց հրազենի, նետ ու աղեղի և արբալետների օգտագործումը[10]:

Միջնադարում մարդասիրական մտքի զարգացումը բավական ակնառու էր Կիլիկիայի հայկական պետությունում: Կիլիկիայի հայկական պետության բանակը, իր կազմում ունենալով զինվորական բժիշկներ, մարտից հետո իր վիրավորներին ապահովում էր բժշկական խնամքով: Մարդասիրական մտքի զարգացման վառ ապացույցներից են Ներսես Լամբրոնացու հեղինակած «Զինվորական օրենքները», որոնք կիրառվում էին Կիլիկիայի հայկական պետությունում: Այսպես, «Զինվորական օրենքները» զինծառայողներից պահանջում էին չկողոպտել խաղաղ բնակիչներին և ընդհանրապես չկատարել քրեորեն պատժելի արարքներ: Եթե զինվորը հարկատուին նյութական վնաս հասցներ և չհատուցեր այն՝ կդատվեր և նրան կպարտադրվեր կրկնակին հատուցել[*]:

XIV դ. վերջում, հրազենի հայտնվելով, ռազմական պատմության մեջ բեկում տեղի ունեցավ: Հրանոթները համընդհանուր փոփոխություններ մտցրեցին ռազմարվեստի մեջ: Միապետն էր գլխավորում բանակը, որը կազմված էր վարձկաններից: Եվրոպայում ստրկությունն արգելվեց: Միևնույն ժամանակ, անհրաժեշտություն դարձավ գերիների խնամքը, քանի որ նրանց հաճախ էին փրկագնով ազատում: XVI դ. դա հանգեցրեց հակամարտող բանակների միջև «կարտելների և կապիտուլյացիաների» համակարգի ստեղծմանը: Առաջին փաստաթուղթը Շվեյցարիայի կանտոնների միջև 1393թ. կնքված Սեմախյան համաձայնագիրն էր, որի դրույթները պահանջում էին հարգանք ցուցաբերել կանանց և վիրավորների նկատմամբ, այդ պատճառով համաձայնագիրը հայտնի է նաև «Կանանց նամակ» անվանումով[12]:

XVI դ. առանձին պետությունների կազմավորումը և Հռոմի պապի հեղինակության անկումը էական փոփոխություններ բերեցին միջազգային իրավունքի բնագավառում: Օտարերկրացիների իրավունքը վերածվեց միջազգային հանրային իրավունքի: Վերածնունդը քրիստոնեական աշխարհը բաժանեց երկու մասի և, անհրաժեշտ էր միջազգային հարաբերությունների համար նոր հիմք գտնել: Այդ հիմքը դարձավ միջազգային իրավունքը: Գլխավոր դերը այդտեղ պատկանում էր բողոքականներին՝ Հուգո Հրոցիին և նրա հետևորդներին :

Միջնադարում ոչ միայն պատերազմի իրավունքի, այլև միջազգային իրավունքի գիտության ձևավորման գործում մեծ ներդրում ունեցավ

---

[10] Humanitarian law in Armed Conflicts..., , p. 13.

[11] Ա.Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Ե., 1978, էջ 194:

[12] L.Oppenheim, նշվ., աշխ., էջ 169:

* Պատերազմի և խաղաղության հարցերի ուսումնասիրության գործում միջնադարում մեծ ներդրում են կատարել Ռայմոնդ Պենոֆորդը, Ալբերիկո Ջենտիլին և այլք:

հոլանդացի իրավաբան Հ.Հրոցին: Իր նշանավոր «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» աշխատությունում (1625թ.) նա ընդհանրացրել և համակարգել է տարբեր ազգությունների իրավագետների և փիլիսոփաների՝ իսպանացիներ Ֆ.Վիտորիի և Ֆ.Սուարեսի, իտալացի Ա.Ջենտիլիի, ֆրանսիացի Ժ.Բոդենի միջազգային իրավական փորձը և հայացքները[13]: Հրոցին մշակել է պատերազմի օրենքները և սովորույթները, այդ թվում՝ ռազմագերիների և վիրավորների նկատմամբ մարդասիրական նորմերը, պատերազմի ժամանակ մասնավոր սեփականության անձեռնմխելիության սկզբունքը և այլն: Ըստ Հրոցիի, միջազգային իրավունքը ստեղծել են ազգերը՝ իրենց ինքնիշխանության պաշտպանության համար: Ուստի, եթե ազգային օրենսդրությունը բնական իրավունքի հիման վրա հռչակել է մարդկանց մի շարք իրավունքներ, այդ իրավունքների պահպանումը պետք է ապահովվի իշխանության մարմիններով: Եթե պատերազմական ժամանակներում, երկրի օրենքները նրա բնակիչներին չեն պաշտպանում թշնամիներից, ապա միայն միջազգային իրավունքը կարող է դա անել[14]:

XVIII դ. պատերազմները վերածվեցին պրոֆեսիոնալ բանակների ճակատամարտերի: Քաղաքացիական բնակչությունը այլևս չէր ներգրավվում ռազմական գործողությունների մեջ:

Բանակների հրամանատարների միջև նախօրոք կնքվում էին համաձայնագրեր, որոնք սահմանում էին պարտված թշնամու հետ վերաբերմունքի պայմանները: Նման բնույթի փաստաթուղթ է «Բարեկամության և խաղաղության մասին պայմանագիրը»՝ կնքված 1785թ. Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ Մեծի և Ֆրանսիայում Ամերիկայի դեսպան Բենջամին Ֆրանկլինի միջև[15]: Պայմանագիրը սահմանում էր, որ հակամարտության դեպքում երկու կողմերն էլ ձեռնպահ կմնան շրջափակումից, և հակառակորդ կողմի քաղաքացիական անձինք կարող են լքել երկրներից յուրաքանչյուրը: Ռազմագերիներին կպահեն և կկերակրեն այնպես, ինչպես և այդ պետության զինվորներին: Հետագայում այդ հոդվածների հիման վրա ստեղծվեց սովորական իրավունքը, որը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. Հոսպիտալները պետք է ունենան անձեռնմխելիության կարգավիճակ և հատուկ տարբերանշաններ:

2. Վիրավորները և հիվանդները չպետք է ռազմագերիներ համարվեն: Նրանց պետք է բուժել ինչպես սեփական զինվորներին և առողջանալուց հետո տուն ուղարկել:

3. Բժիշկներին, նրանց օգնականներին և հոգևորականներին չի կարելի գերի վերցնել: Անհրաժեշտ է նրանց վերադարձնել իրենց բանակները:

4. Ռազմագերիների կյանքը պետք է պաշտպանության ներքո գտնվի: Նրանք պետք է փոխանակվեն առանց որևէ փրկագնի:

5. Խաղաղ քաղաքացիական բնակչությունը չպետք է տառապի ռազմական գործողություններից:

1762թ. Ժան-Ժակ Ռուսոն իր «Հասարակական դաշինք» աշխատությունում գրում էր. «Պատերազմը հարաբերություն է ոչ թե մարդկանց, այլ պետությունների միջև, մարդիկ թշնամիներ են դառնում պատահաբար, ոչ որպես մարդկային էակներ և ոչ էլ որպես քաղաքացիներ, այլ որպես

---

[13] В.Калугин, Л.Павлова, И.Фисенко, նշվ., աշխ., էջ 19:

[14] Жан Пикте, նշվ., աշխ., էջ 28:

[15] Տե՛ս Humanitarian law in Armed Conflicts ..., p. 14.

զինվորներ, ոչ որպես իրենց երկրի բնակիչներ, այլ որպես նրա պաշտպաններ... Եթե պատերազմի նպատակն է թշնամական պետության ոչնչացումը, ապա պատերազմող կողմը իրավունք ունի ոչնչացնել նրա պաշտպաններին, քանի դեռ նրանք վայր չեն դրել զենքը, բայց երբ նրանք դաղարում են թշնամի կամ գործիք լինել թշնամու ձեռքին, նորից վերածվում են սովորական մարդկանց, որոնց կյանքը ոչ մեկին իրավունք չի տրվում խլել»[16]: Այսպիսով, Ռուսոյին է պատկանում ժամանակակից պատերազմի իրավունքի հիմնարար կանոնի առաջին հստակ ձևակերպման առաջնությունը: Համաձայն Ռուսոյի, պատերազմող կողմը հետապնդում է միայն մի նպատակ՝ թշնամական պետության ենթարկումը և ոչ ավելին: Մարտունակությունը կորցրած զինվորները և խաղաղ բնակչությունը չեն կարող պատասխանատվություն կրել այն հանցագործությունների համար, որոնք իրենք չեն կատարել, նրանց կյանքը պետք է խնայվի, և նրանք պետք է զերծ մնան տառապանքներից:

Այդ գաղափարները տեղ գտան ֆրանսիական հեղափոխությունում, որն իր սահմանադրության մեջ հանդիսավոր կերպով հռչակեց. «Յուրաքանչյուր մարդ ունի անկապտելի սրբազան իրավունքներ», և ընդունեց մարդու իրավունքների հռչակագիրը: Ավելին, օրենսդրությունը պահանջում էր «պարտադիր միանման վերաբերմունք իր և թշնամու զինվորների նկատմամբ» և սահմանում, որ «ռազմագերիները գտնվում են ազգի և օրենքի պաշտպանության ներքո»[17]:

Չնայած որ միջազգային մարդասիրական իրավունքի արմատները սկիզբ են առնում հին աշխարհից, սակայն նրա իսկական վերելքը սկսվեց XIX դ., մի կողմից՝ չեզոքության իրավունքի նորմերի զարգացմամբ, մյուս կողմից՝ Կարմիր խաչի շարժման սկզբնավորմամբ:

XIX դ., երբ պատերազմները մղում էին հսկայական պետական բանակները, որոնք օգտագործում էին զենքի նոր և ավելի ավերիչ տեսակներ, երբ մարտի դաշտում բազմաթիվ վիրավորներ թողնվում էին բախտի քմահաճույքին, ծագեց պատերազմի իրավունքը՝ հիմնված բազմակողմ համաձայնագրերի վրա: Եվ պատահական չէ, որ դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ արևմտյան պետություններում սկսեցին առաջնային նշանակություն ունենալ մարդու իրավունքներին վերաբերող ընդհանուր սկզբունքները: Այդ գործընթացում վճռորոշ դեր խաղաց «Ժնևի կոմիտեն»՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) նախակարապետը:

XIX դ. կեսերին մարդասիրական մտքի զարգացման կենտրոնը այդ ժամանակաշրջանի ժողովրդավարական պետություններն էին՝ Արևմտյան կիսագնդում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, իսկ Արևելյան կիսագնդում՝ Շվեյցարիան, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան:

1863թ. Վաշինգտոնում, Հյուսիսի և Հարավի միջև ընթացող քաղաքացիական պատերազմի ժամանակ, ԱՄՆ-ի նախագահ Ա.Լինքոլնը հրապարակեց հայտնի հրամանագիր՝ «Հրահանգ ԱՄՆ-ի դաշտային զորքերին»[18]: Հրահանգի տեքստը գրել էր Ամերիկա գաղթած, գերմանական ծագումով, միջազգային իրավունքի մասնագետ Ֆրենսիս Լիբերը: Հրահանգը

---

[16] Տե՛ս Жан Пикте, նշվ., աշխ., էջ 32:

[17] Quincy Wright, A Study of War, London, 1942, p. 28.

[18] Фриц Кальсховен, Ограничения методов и средств ведения войны (МККК, М., 1994, с. 13).

(ինչպես այն հաճախ անվանում են «Լիբերի օրենսգիրքը») պարունակում է մանրամասն կանոններ, որ վերաբերում են ցամաքային պատերազմի բոլոր գործողություններին՝ մարտական գործողություններ վարելու ձևերից մինչև քաղաքացիական բնակչության հետ վարվելակերպի կանոնները: Չնայած որ «Լիբերի օրենսգիրքը» փաստացիորեն ներքին փաստաթուղթ էր և նախատեսված էր քաղաքացիական պատերազմի պայմաններում կիրառելու համար, այնուհանդերձ, այն, որպես նմուշ և ոգեշնչման աղբյուր ծառայեց նրանց համար, ովքեր ավելի ուշ՝ XIX դ. վերջին, միջազգային մակարդակով ջանքեր գործադրեցին պատերազմի օրենքների և սովորույթների օրինակարգման համար:

1859թ. շվեյցարացի ձեռնարկատեր Անրի Դյունանը, որը պատահականորեն վկա դարձավ Հյուսիսային Իտալիայում Սոլֆերինոյի ճակատամարտից հետո լքված հազարավոր վիրավորների տառապանքներին, փորձեց օգնություն կազմակերպել բոլոր նրանց՝ անկախ ազգությունից: Հետագայում Դյունանը գրեց «Սոլֆերինոյի ճակատամարտի մասին» գիրքը, որտեղ առաջարկեց՝

1. խաղաղ ժամանակ յուրաքանչյուր երկրում ստեղծել հատուկ պատրաստված կամավորների կազմակերպություն, որը պատրաստ է օգնություն ցուցաբերել պատերազմի զոհերին,

2. կնքել միջազգային համաձայնագրեր՝ մարտի դաշտում վիրավորվածների և նրանց օգնություն ցուցաբերողների պաշտպանության մասին:

Այդ գաղափարները կյանքի կոչելու համար Ժնևի չորս քաղաքացիներ՝ գեներալ Գիյոմ Դյուֆուրը, իրավաբան Գյուստավ Մուանյեն, բժիշկներ Լուի Ադիան և Թեոդոր Մոնուարը, Անրի Դյունանի հետ մեկտեղ, կազմակերպեցին Ժնևի կոմիտեն, որը հետագայում վերածվեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեի[19]: Ի պատասխան ԿԽՄԿ-ի կոչի՝ 1863թ. հոկտեմբերին մի շարք երկրների (Ռուսական կայսրություն, Պրուսիայի թագավորություն, Շվեյցարիայի Համադաշնություն և այլն) ներկայացուցիչներ հանդիպեցին Ժնևում և որոշեցին ստեղծել վիրավորների օգնության միություններ և «կամավոր օգնականների» ընկերակցություններ, որոնք հետագայում «Կարմիր խաչի ազգային միություններ» անվանումը ստացան: Միջազգային կոմիտեն անհրաժեշտ համարեց չեզոքության կարգավիճակ սահմանել ինչպես վիրավորների՝ ռազմական գործողությունների զոհերի համար, որոնք այլևս չեն մասնակցում մարտական գործողություններին, այնպես էլ անձնակազմի համար, որը նրանց օգնություն է ցուցաբերում:

Սակայն այդ վիթխարի մտահղացման իրականացման համար անհրաժեշտ էր համագործակցել կառավարությունների մակարդակով: Ահա թե ինչու Կարմիր խաչի հինգ հիմնադիրները համոզեցին Շվեյցարիայի կառավարությանը՝ օժանդակել իրենց և միջազգային պայմանագրի նախագծի պատրաստման համար հրավիրել դիվանագիտական կոնֆերանս, որի հիմքում կընկներ այդ գաղափարը: Դիվանագիտական կոնֆերանսը բացվեց 1864թ. օգոստոսին, Ժնևում: Այնտեղ 12 պետության ներկայացուցիչներ ստորագրեցին ոչ մեծ (ընդամենը 10 հոդվածից բաղկացած) միջազգային պայմանագիր, որը ստացել է «Ցամաքային պատերազմի ժամանակ վիրավոր և հիվանդ մարտիկների վիճակի բարելավման մասին» համա-

---

[19] Մանրամասն տե՛ս Пьер Буасье, Первые годы Красного Креста (МККК, М., 1994, с. 9).

ձայնագիր անվանումը[20]: Այնտեղ հստակ արտահայտված է այն համընդհանուր մարդասիրական սկզբունքի գաղափարը, որը պայմանավորվող կողմերին պարտավորեցնում է միատեսակ վերաբերմունք սեփական ու հակառակորդի վիրավորներին:

1864թ. «Ժնևի կոնվենցիայի» ստորագրումը բացառիկ քայլ հանդիսացավ մարդկության պատմական զարգացման ճանապարհին, քանի որ հենց այդ ժամանակ դրվեց միջազգային մարդասիրական իրավունքի ստեղծման հիմքը՝ նախատեսված զինված հակամարտությունների զոհերի և նրանց օգնություն ցուցաբերելու համար ստեղծված անձնակազմի պաշտպանության համար:

РАЗВИТИЕ ГУМАНИТАРНОЙ МЫСЛИ С ДРЕВНЕЙШИХ ВРЕМЕН ДО НОВОГО ВРЕМЕНИ

В.А.ПАХЛАВУНИ

Резюме

Международное гуманитарое право является одним из значительных разделов международного права. Оно направлено на защиту индивидуума в военное время. Задачей международного гуманитарного права является регулирование военных действий с целью облегчения приносимых ими невзгод и лишений. Развитие гуманитарной мысли, начиная с древнейших времен, происходило под воздействием разных факторов. На этот процесс оказывали воздействие социально-экономические формации, идеология цивилизаций, религия и религиозные течения, идеи и мысли правоведов и мыслителей прошлого. Наряду с усовершенствованием средств и методов ведения войны происходила гуманизация этой отрасли права. В древние века и в средневековье были сформированы те идеи и правила, которые легли в основу правовых источников международного гуманитарного права – Женевских конвенций 1949 года и дополнительных протоколов к ним от 1977 года. Большой вклад в процесс становления международного гуманитарного права внес Международный Комитет Красного Креста.

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 13: